5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	09-003-0100-0012-001	Վարչական շենք	47 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության իրավունքի ժամկետը՝ մինչև 23.09.2024թ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Թամարա Մարգարյան

Հաստատված պաշտոնը՝ Անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 27092019-09-0026, գաղտնաբառ՝ PEERGQCAAAXJ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 27 սեպտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, Ի ԴԵՄՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Սյունիք, համայնք Գորիս Գորիս ք. Մաշտոցի փողոց 3 թիվ 2 վարչական շենք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պայմանագիր անշարժ գույքի վարձակալության 23.09.2019թ. գ/մ 3697

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 27092019-09-0026, գաղտնաբառ՝ PEERGQCAAAXJ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Նոտարական ակտի կոդ: 612-20190923-37-4189581
Նոտարական ակտի գաղտնագիր: DLMEN6

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Անշարժ գույքի վարձակալության

երկու հազար տասնինը թվականի սեպտեմբերի քսաներեք
Քաղաք Գորիս Հայաստանի Հանրապետություն

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի, որի անունից 20.09.2019թ. տրված թիվ 01/05-700 լիազորագրով գործում է համայնքապետարանի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ ՎԱՀԵ ՊՈՂՈՍՅԱՆԸ, ծնված 01.09.1968թ., անձն. AM 0701623, տրված 25.04.2012թ., 032-ից, հաշվառված՝ ք. Գորիս, Բակունցի փ., տ. 84, այսուհետ՝ ՎԱՐՁԱՏՈՒ, մի կողմից և

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ>> Պետական մարմին, հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ Մ.ՄԿՐՏՉՅԱՆ Փ. / 5, գրանցման համար՝ 286.184.1077541, ՀՎՀՀ՝ 02698604, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ **ԱՐՄԵՆ ՎԼԱԴԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, որի անունից 13.09.2019թ. տրված թիվ ԴԲ/8758-19 լիազորագրով գործում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության Սյունիքի բաժնի պետի պաշտոնակատար ԱՐՄԻԿ ՍԵԴՐԱԿԻ ԲԱԿՈՒՆՑԸ, ծնված՝ 11/09/1959թ-ին, ՀԾՀ՝ 2109590157, անձնագիր՝ AM0481198, տրված՝ 032-ի կողմից, 20/10/2011թ-ին, հաշվառված՝ ՍՅՈՒՆԻՔ, ԳՈՐԻՍ, ՎԵՐԻՇԵՆ, 14 Փ., 17 Տ** , այսուհետ՝ ՎԱՐՁԱԿԱԼ, մյուս կողմից (այսուհետ համատեղ՝ Կողմեր), 18.09.2019թ. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարի թիվ 689-Ա որոշման և 20/08/2019թ. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու թիվ 68-Ա որոշման համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին, այսուհետ՝ Վարձակալ, մյուս կողմից (այսուհետ համատեղ՝ Կողմեր):

1. Պայմանագրի առարկան

1.1. Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 30-րդ հոդվածով, 35-րդ հոդվածով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 27.06.2005թ. գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրանցված (Վկայական՝ թիվ 1135304)՝ սեփականության իրավունքով Վարձատուին պատկանող ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Մաշտոցի փողոցի թիվ 3 (երեք) հասցեի թիվ 2 (երկու) վարչական շենքի 3-րդ (երրորդ) հարկից 47քմ. (քառասունյոթ) ընդհանուր մակեևեսով տարածքը՝ 2 /երկու/ սենյակ, որի նկարագիրը տրված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հատակագծում (այսուհետ՝ Օբյեկտ):

1.2. Սույն պայմանագիրը կնքվում է 5/հինգ/ տարի ժամկետով, սկիզբ է համարվում 2019 թ-ի սեպտեմբերի 23-ը (քսաներեքը) և գործում է մինչև 2024 թվականի սեպտեմբերի 23-ը (քսաներեքը):

1.3. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Օբյեկտի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները Վարձակալի սեփականությունն են:

1.4. Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագիրը կնքելու պահին պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը գրավ դրված չէ, արգելանքի և կալանքի տակ չի գտնվում, որը հավաստվում է նաև ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 17.09.2019թ.-ին տրված թիվ ՄՏ-17092019-09-0405 միասնական տեղեկանքով:

1.5. Օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագրիը լուծելու կամ փոփոխելու համար:

1.6 Պայմանագրի գործողության ժամկետի ավարտով կողմերի իրավունքները և պարտավորությունները դադարում են:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1 պահանջել Վարձակալից՝ Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան,

2.1.2 եթե Վարձակալը Օբյեկտից օգտվում է սույն պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել

վնասները:

2.2 Վարձատուն պարտավոր է՝

2.2.1 Պայմանագրի կնքման պահից Օբյեկտը հանձնել Վարձակալին,

2.2.2 իր միջոցներով կատարել Օբյեկտի հիմնական վերանորոգումը,

2.2.3 Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Օբյեկտի թերությունները, որոնք առաջացել են վարձակալից անկախ պատճառներով՝ կամ համաչափ իջեցնել Օբյեկտի վարձավճարը,

2.2.4 Վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին, որի չկատարումը Վարձակալին իրավունք է տալիս լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել Վարձակալին պատճառված վնասները,

2.2.5 Վարձատուի մեղքով կամ Վարձատուի կողմից այլ անձանց նկատմամբ ունեցած պարտավորությունների չկատարման պատճառով Օբյեկտի օգտագործման անհնարինության դեպքերում Վարձակալին հատուցել դրա հետևանքով վերջինիս պատճառված վնասները:

2.3 Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1 պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 2.2.1 կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Օբյեկտը,

2.3.2 Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրել Օբյեկտի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը,

2.3.3Օբյեկտի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3.1 Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Օբյեկտի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը, կամ հատուցելու Օբյեկտի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը, և/կամ

2.3.3.2 Վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը, և/կամ

2.3.3.3 պահանջել վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը,

2.3.4 Վարձատուի կողմից սույն պայմանագրի 2.2.2 կետով սահմանված պարտավորությունները չկատարելու դեպքում իր ընտրությամբ՝

2.3.4.1 կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած Օբյեկտի հիմնական վերանորոգումը և Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվանցել վարձավճարի հաշվին,

2.3.4.2 պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը,

2.3.4.3 պահանջել լուծել սույն պայմանագիրը և Վարձակալին հատուցել պատճառված վնասները:

2.3.5 ինքնուրույն կատարել Օբյեկտի ներքին լրացուցիչ ձևավորման և կահավորման աշխատանքները:

2.4 Վարձակալը պարտավոր է՝

2.4.1 Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությանը համապատասխան,

2.4.2 սույն պայմանագրի 2.2.1 կետում նշված ժամկետում ընդունել Օբյեկտը՝ սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված վարձատրության պայմաններով:

2.4.3 ժամանակին վճարել իր կողմից օգտագործած էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, հեռախոսակապի և աղբահանության վճարները, ինչպես նաև Օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված վարձավճարը,

2.4.4 Օբյեկտն ազատել սարքին վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

3 Հաշվարկները

3.1 Տարեկան վարձակալության վճարի չափը 1քմ. համար սահմանել տարեկան 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, որը կփոխանցվի համայնքապետարանի 900285125135 հաշվին:

4 Կողմերի պատասխանատվությունը

4.1Սույն պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

5 Վարձակալած Օբյեկտի բարելավումները

5.1Վարձակալած Օբյեկտից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են Վարձակալի սեփականությունը:

5.2Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին Վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած Օբյեկտից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով:

5.3 Վարձակալի կողմից առանց Վարձատուի համաձայնության կատարած վարձակալած Օբյեկտից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

6 Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

6.1Վարձատուի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

6.1.1Օբյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով,

6.1.2Վարձակալի մեղքով էականորեն վատթարացել է Օբյեկտի վիճակը, սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետներում Վարձակալը երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը,

6.2Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝

6.2.1 Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Օբյեկտը կամ խոչընդոտներ է ստեղծել Օբյեկտը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար,

6.2.2 Վարձակալին հանձնված Օբյեկտն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին, և վերջինիս չի հայտնաբերել պայմանագիրը կնքելիս,հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Օբյեկտը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

6.3 Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Վարձատուի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել միայն Վարձակալի կողմից սույն պայմանագրով նախատեսված պայմանների պարբերաբար կոպիտ խախտման դեպքում:

6.4 Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագիրը կարող է լուծվել ցանկացած ժամանակ:

7 Վեճերի լուծման կարգը

7.1Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

7.2Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

8.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունքը, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, որը և կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտականությունների կատարումը:

8.2 Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագրիը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

9 Եզրափակիչ պայմաններ

9.1Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում՝ 30 աշխատանքային օրյա ժամկետում:

9.2 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից:

9.3 Սույն պայմանագրի որևէ կետի դադարեցումը, անվավեր կամ չեղյալ հայտարարելը չի հանգեցնում մյուս կետերի դադարեցմանը, անվավեր կամ չեղյալ հայտարարելուն:

9.4Սույն պայմանագրի կնքմամբ Կողմերը հավաստում են, որ սույն պայմանագրով ամրագրված բոլոր դրույթները համապատասխանում են իրենց կամքի ազատ արտահայտությանը:

9.5 Սույն պայմանագրի կնքման ծախսերը կատարվում են Վարձատուի, իսկ պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը՝ Վարձակալի կողմից:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է հայերենով, կնքված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 (չորս) օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, մեկ օրինակը տրվում է ներկայացնելու ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցում կատարելու համար, իսկ մեկ օրինակը մնում է նոտարի մոտ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձատու՝
ՀՀ Գորիս համայնքի
լիազորված անձ

Վարձակալ՝

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
լիազորված անձ

երկու հազար տասնինը թվականի սեպտեմբերի քսաներեք սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ <<Սյունիքի մարզ>> նոտարական տարածքի նոտար Առնո Գրիգորի Առաքելյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը ստուգված է:

ՀՀ Քաղ. Օրենսգրքի 135 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյանում 3697

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Առնո Գրիգորի Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

20/08/2019 Քաղվածք

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 68-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԹԻՎ 2 ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 30-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ էկոնամիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 08/07/2019թ-ի գրությունը և համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող, Գորիս քաղաքի Մաշտոցի փողոցի թիվ 3 հասցեի թիվ 2 վարչական շենքի (վկ.՝ 1135304, կոդ. համ.՝ 09-003.2-1) 3-րդ հարկից (համաձայն սխեմայի) 47 քմ մակերեսով 2 սենյակ վարձակալությամբ տրամադրել ՀՀ էկոնամիկայի նախարարությանը 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. Տարածքի վարձակալության վճարի չափը 1 քմ-ի համար սահմանել տարեկան 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՄԵՆՈՒԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղար Լ.Ղուկասյան

18 սեպտեմբեր 2019թ.
Ք.Գորիս



ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՄԱՇՏՈՑԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԹԻՎ 2
ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿ

3-րդ հարկ

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

ՇՏՐԻԽՎԱԾ ՄԱՍԸ 47.0ՔՄ ՀԱՏԿԱՑԿՈՒՄ Է ՀՀ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Ա. ՍՈՒՐԵՆՅԱՆ
«___» _____ 2019թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

18.09.2019թ.

ՈՐՈՇՈՒՄ 689-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԹԻՎ 2 ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի, հիմք ընդունելով ՀՀ Սյունիք մարզի Գորիս համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 20-ի N 68-Ա որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս քաղաքի Մաշտոցի փողոցի թիվ 3 հասցեի թիվ 2 վարչական շենքի (վկ.՝ 1135304, կոդ. համ.՝ 09-003.2-1) 3-րդ հարկից (համաձայն սխեմայի) 47 քմ մակերեսով 2 սենյակ վարձակալությամբ տրամադրել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը 5 /հինգ/ տարի ժամկետով:
2. Տարածքի վարձակալության վճարի չափը 1 քմ-ի համար սահմանել տարեկան 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:
3. ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ կնքել ոչ բնակելի տարածքի օգտագործման պայմանագիր և սահմանել, որ պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո դադարում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները:
4. Վարձակալը պարտավոր է կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Գորիսի սպասարկման գրասենյակում:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2019/18/09
Ք.Գորիս